# ՍՏԱՑԵԼ ԵՄ ՉՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ։ Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ

ԱՅՑԵԼԵ՛Ք LACOURT.ORG

## GET HELP WITH YOUR TICKET

Ձեր տոմսակի հարցով օգնության համար այցելե՛ք: LACourt.org
欲获取罚单帮助，请登录: LACourt.org
교통 위반 티켓에 대한 도움을 받으십시오: LACourt.org
Hãy nhờ giúp về giấy phạt của quý vị tại: LACourt.org

Ինչպե՞ս կարող եմ օգնել Ձեզ



**ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՀԱՅՑԻ ԴԱՐՊԱՍ**

- ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ՝ ՁԵՐ ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆԻՍՏԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ LACOURT.ORG
- ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ԴԵՊՔՈՒՄ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՉԿԱ

### ***ԿԱՐԵՎՈՐ***

- Ձեր տուգանագրին նշված վերջնաժամկետը սպառվել է, և այդ կապակցությամբ քայլ չի ձեռնարկվել։ Արդյունքում, Ավտոմեքենաների վարչությանը ծանուցվել է Ձեր չներկայանալու մասին։ Ձեր տուգանագրին ավելացվել են հավելյալ տուգանք՝ Ավտոմոբիլային օրենսգրքի բաժին 40508(a)-ի, և $300 քաղաքացիական տույժ՝ ըստ Քրեական օրենսգրքի բաժին 1214.1-ի։
- $300 քաղաքացիական տույժի գումարը կարող եք հանել «ԳՐԱՎԱԳՈՒՄԱՐԻՑ» (Bail Amount), եթե լիարժեք վճարում կատարվի, ու վճարված գումարը ստացվի Լոս Անջելեսի Առաջին ատյանի դատարանի դեղին Ծանուցագրում նշված գործողության կատարման օրից հետո 20 օրացուցային օրվա ընթացքում։

**ՀԵՏԵՎՅԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՆ ԱՌԿԱ ԵՆ ԴԵՂԻՆ ԾԱՆՈՒՑԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԻՑ ՀԵՏՈ 20 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ.**

## ՏՈՒԳԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ.

- ՎՃԱՐԵՔ ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐՈՒՄ. երթևեկության դատարանի այն տեղամասերի ցանկի համար, որտեղ կարող եք վճարում կատարել, այցելե՛ք LACourt.org։
- ԱՎՏՈՄԱՏ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ. Ձեր տեղական հեռախոսահամարը գտնելու համար այցելե՛ք LACourt.org։
- ՓՈՍՏ. Ուղարկե՛ք “BAIL AMOUNT” ը (ԳՐԱՎԱԳՈՒՄԱՐԸ)՝ վճարելի “LA Superior Court”-ին, վճարման կտրոնի հետ մեկտեղ։

## ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՆԱՅԱԼՈՒ ՏԱՐԲԵՐԱԿԸ.

- Մեղադրանքի ներկայացման նիստի օր նշանակելու համար այցելե՛ք LACourt.org, կամ ներկայացեք երթևեկության դատարանի ցանկացած տեղամաս։ կարող եք խնդրեք, որ մեղադրանքի ներկայացման նիստին նաև դատի օր նշանակվի։
- Մեղադրանքի ներկայացման նիստ նշանակելու համար գրավագումար մուծելն անհրաժեշտ չէ։ Ըստ Կալիֆորնիայի Դատարանի կանոնների կանոն 4.105-ի, դատական պաշտոնյային կարող եք ներկայանալ առանց գրավագումար մուծելու, որոշ բացառություններով։ Կանոնին ծանոթանալու համար այցելե՛ք www.LACourt.org/page/EXGV-CRC4105։
- Եթե Ձեր Ծանուցագրի “BAIL AMOUNT” (ԳՐԱՎԱԳՈՒՄԱՐ) վանդակում “SEE BELOW” (ՏԵ՛Ս ՍՏՈՐԵՎ) նշումը կա, ապա պարտադիր կերպով պետք է ներկայանաք դատական պաշտոնյային։

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԻՑ ՀԵՏՈ 20 ՕՐ ԱՆՑ, ՁԵՐ ԳՈՐԽԸ ԿՀՂՎԻ ՊԱՐՏԱՀԱՎԱՔ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ։ ԱՅԴՈՒՀԵՏ ՁԵՐ ՏՈՒԳԱՆԱԳՐԻ ՀԱՐՑԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՊՎԵԼ ՊԱՐՏԱՀԱՎԱՔ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՀԵՏ։**

## Պարտահավաք կապալառու. GC Services

- ՀԵՌԱԽՈՍՈՎ. Անգլերեն՝ (800) 352-3778, կամ իսպաներեն՝ (800) 511-0734
- ԱՌՑԱՆՑ. http://courtpay.gcserv.com
- ԱՆՁԱՄԲ. Ներկայացուցիչներ կան երթևեկության դատարանի բոլոր տեղամասերում։

**ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ըստ Կալիֆորնիայի Դատարանի կանոնների, կարող եք խնդրել կամ խնդրագիր ներկայացնել, որ քաղաքացիական տույժը նվազեցվի կամ վերացվի, կամ վճարունակության եզրակացություն կազմվի։

Հավելյալ տեղեկատվության և խնդրագրի օրինակի համար այցելե՛ք LACourt.org, կամ երթևեկության դատարանի ցանկացած տեղամաս։